# ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ Գ․ՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Համայն հայութեան նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ՝ եկեղեցասէր ու ազգասէր հայորդուդ, Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Գոհունակութիւն էր Մեզ համար տեղեկանալ Գեղարքունեաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մարկոս եպիսկոպոս Յովհաննիսեանից, որ Դուք եկեղեցաշէն նախաձեռնութիւններով ներդրում էք բերում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պէտունապարտուէր առաքելութեանը, ինչը խօսուն վկայութիւն է մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ Ձեր նուիրումի ու որդիական հաւատարմութեան: Ձեր սրտաբուխ բարերարութեամբ է հիմնովին վերակառուցուել Տիրախնամ թեմի Ծովինար համայնքի Սուրբ Աստուածածին եկեղեցին, բարեկարգուել եկեղեցուն կից տարածքը, ինչպէս նաև հայորդուդ ազնիւ նուիրատուութիւններով են կատարուել առաջնորդարանի ամրակայման աշխատանքները, իրագործուել ծուխի կիրակնօրեայ դպրոցի ծրագրերը:

Մենք վստահ ենք, որ վերանորոգուած Սուրբ Աստուածածին եկեղեցին նոր խթան պիտի լինի Ձեր հայրենի Ծովինար համայնքի բնակիչների հոգևոր վերազարթօնքի համար, ովքեր իրենց հոգիներում ամրապնդելով լոյս հաւատքը, սէրն ու հաւատարմութիւնը առ մեր Սուրբ Եկեղեցին եւ նախանձախնդրութիւնը քրիստոնէական մեր սրբութիւնների նկատմամբ՝ առ Բարձրեալն Աստուած ուղղուած աղօթքներում պիտի յիշեն նաև Ձեր անունը եւ բարի գործը:

Յարգարժան տիար Յակոբեան, Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով, ընդառաջելով Գեղարքունեաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մարկոս եպիսկոպոս Յովհաննիսեանի խնդրանքին, շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մենք հաւատում ենք, որ նոյն քաջեռանդութեամբ Դուք պիտի շարունակէք Ձեր հաւատքը վկայել ազնիւ կեանքով եւ բարի գործերով՝ որպէս արժանաւոր զաւակը մեր Մայր Եկեղեցու:

Աղօթում ենք, որ Ամենակալ Տէրը Սուրբ Աստուածածնի բարեխօսութեամբ շնորհի

Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին կեանքի քաջառողջ ու արեւշող բազում օրեր եւ Ձեր բոլոր առաքինի ձեռնարկումները պսակի մշտանորոգ յաջողութիւններով:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 19-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ.
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 688